

9749



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



« 04 » 09 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 183 - 24

Նախաձեռնող՝

«ԱԳՇԻՆ»ՍՊԸ  
Երևան, ֆուլիկի 27/38

Գործունեությունը՝

Աջափնյակ վարչական  
շրջանի Ֆուլիկի 27/38 հասցեում նախատեսվող  
բնակելի համալիրի կառուցում  
Երևան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 183 - 24

«04» սեպտեմբեր 2024թ.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Յու. Ֆուչիկի փողոց 27/38  
հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի  
կառուցման գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱԳՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Յու. Ֆուչիկի փ.27/38

**Ներածական մաս.** «ԱԳՇԻՆ» ՍՊԸ ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Յու. Ֆուչիկի փողոց 27/38 հողամաս հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ № 17052024-01-0280 /ծածկագիրը՝ 01-001-0205-0028/, Երևանի քաղաքապետարանի կողմից 13.05.2024թ. տրված №01/50-01-1733-Ա նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Համաձայն գնահատման հաշվետվության, նախագծային փաստաթղթի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ համալիրը բաղկացած է բլոկացված տեղադրությամբ 3 կառույցներից՝ 2 երկսեկցիոն և 1 մեկսեկցիոն շենքերից: Շենքերը համարակալված են որպես Ա (1-8 առանցքներ), Բ (9-13 առանցքներ) և Գ (14-21 առանցքներ) մասնաշենքեր, որոնք Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի երկայնքով, որոնք նախատեսված են աստիճանաբար հետ գնացող ծավալների հորինվածքային լուծմամբ: Կառույցի հակառակ կողմում նախատեսվում է բակային տարածություն: Շենքի ողջ պարագծով ապահովված են սպասարկող ճանապարհներ, որոնք կառույցի երկու եզրերի հատվածներում կապվում են Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի հետ, և հաշվի են առնված հրշեջ մեքենաների անցման համար անհրաժեշտ նորմատիվային չափերը: Համալիրի սահմաններում, առանձին խարկային



կառույցի տեսքով նախատեսված է նաև ավտոլվացման կետ, որը հարում է Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքին:

Ընդհանուր կառույցի վերգետնյա հատվածի հատակագծային չափերը եզրային առանցքներով կազմում են 31.4X129.1 մ, բլոկների խորությունը եզրային առանցքներով՝ 20.0-20.8մ: Կառույցի հարկայնությունը վերգետնյա հատվածում փոփոխական է՝ 17-20 հարկի սահմաններում: Նախատեսվում է 2 ստորգետնյա հարկ (-6.90 և 3,60 նիշերով), որոնք նախատեսված են ավտոկայանատեղերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ժամանակ բնակչության անվտանգության ապահովման համար: Ստորգետնյա ավտոկայանատեղիում նախատեսվում են նաև էլեկտրոմոբիլների լիցքավորման կայաններ:

Վերգետնյա 1-ին հարկը (1.00 նիշով Ա մասնաշենքում, 0.455 Բ մասնաշենքում և 0.90 Գ մասնաշենքում) տրամադրված է սպասարկման տարածքներին: Այս հարկից են կազմակերպված նաև բնակելի հատվածի մուտքերը՝ բակի կողմից, իսկ հասարակական սպասարկման տարածքների մուտքերը կազմակերպված են առանձին մուտքերով: Ավտոկանգառից ելքերը նախատեսվում են շենքը սպասարկող սանդղավանդակներով և վերելակներով: Վերգետնյա 1-ին հարկի սահմաններում Ա և Գ մասնաշենքերի եզրային հատվածներում նախատեսված են հետիոտն անցումներ, որոնք ապահովում են բակային տարածության կապը Մարգարյան փ. 1-ին նրբանցքի հետ: Վերգետնյա 2-րդ հարկից սկսած նախատեսվում են բնակարանները: Բնակելի հատվածը բաղկացած է 5 սեկցիայից՝ յուրաքանչյուրն առանձին մուտքով: Բնակարանների քանակը ըստ հարկերի փոփոխական է: 2-րդ, 7-րդ, 8-րդ, 17-րդ, 20-րդ հարկերի համար ներկայացված է նաև հատակագծային լուծման լրացուցիչ տարբերակ: Յուրաքանչյուր հարկում մուտքային հանգույցում նախատեսված է նախասրահ, սանդղավանդակ, վերելակային նախասրահ (2 վերելակ): Էլեկտրամատակարարման, խմելու ջրի, ցածր լարման հաղորդալարերի կոմունիկացիաները կազմակերպված են բնակելի հատվածների նախասրահերում: Բնակարաններում տեղային օդափոխիչների տեղադրումը նախատեսվում է պատշգամբերում: Բնակարանների սպասարկման համար առաջին հարկերում՝ վերելակային նախասրահին կից նախատեսվում են բաժանորդային փոստարկղերի տեղադրման հատվածներ: Սանդղավանդակներում նախատեսվում են հակահրդեհային ինքնափակվող դռներ: Բնակելի և հասարակական տարածքներում նախատեսված է բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Կառույցում օգտագործվելու են երկաթբետոնե միաձույլ պատային համակարգ: Արտաքին պատերում նախատեսված է իրականացնել ջերմամեկուսացում՝ բնական քարով (բազալտ, մինչև 7,10 նիշը) ու այլումինով (3 գույնի) երեսապատում (350-650 մմ ընդհանուր հաստությամբ): 2-րդ, 7-րդ և 8-րդ հարկերում կոնսոլների մասնակի կրճատումը, երեսապատող նյութերի գունային փոփոխությունները, ինչպես նաև տանիքների բազմամակարդակ կազմակերպումը ուղղված են կառույցի խոշոր ծավալների միջավայրի հորինվածքային մասշտաբին հնարավորինս ներդաշնակեցմանը: Տանիքները հարթ են, նախատեսվում են անմիջապես բլոկների վերին մակարդակի ծածկասալերի վրա: Ա և Գ մասնաշենքերի տանիքների տարբեր հատվածներ նախատեսված են որպես տերասաններ՝ կից բնակարանների (Ա, Բ և Գ մասնաշենքերի) համար:



Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերեսը – 7471.9 մ<sup>2</sup>
- կառուցապատման մակերեսը (ներառյալ ճանապարհ, մայթ, հարթակ և այլն) – 4468.2 մ<sup>2</sup>
- կանաչապատումը մինչև Մարգարյան փ. 1-ին նրբանցքի մայթեզրը – 3148.8 մ<sup>2</sup> :

Ստորգետնյա առաջին հարկի մակերեսը կազմում է 5902.5 մ<sup>2</sup>, երկրորդ հարկինը՝ 5834.4 մ<sup>2</sup> :  
Կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 54499.5 մ<sup>2</sup>:

Բնակարանների քանակը՝ 462 հատ, ավտոկայանատեղերինը՝ 314 հատ:

Ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 48 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փոռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են համապատասխան աղբավայր և փոխարինվելու են նորով:

Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու: Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 80 մարդ, որից ինժինեռատեխնիկական անձնակազմ՝ 10 մարդ:

Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9030 խմ/շին. ժամ:

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա ջուր» ՓԲԸ ցանցին՝ տարածքի հարևանությամբ անցնող D200մմ խողովակաշարից: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 630 Կվա հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ Տե-0958 ենթակայանից:

Նախատեսվող գործունեության իրականացումը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 50000 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող 42000 մ<sup>3</sup> ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:



Օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում են՝

- շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են՝

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսվում են՝

- շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրաված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավի ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը: Ջրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 3003,7 մ<sup>2</sup>: Տարածքում նախատեսվում է տնկել գնդաձև ակացիա 34 հատ, սյունաձև թույա 52 հատ, սիրիական վարդ 122 հատ, սիզամարգ – 3041.3 մ<sup>2</sup> (սիզամարգի մակերեսը ներառում է մինչև մայթ հատվածը):
- Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են հրդեհի առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, աշխատողների վնասվածքները, շահագործվող տեխնիկայի վթարները: Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքային անվտանգության կանոնների:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում
- մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:



Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ ներգրավում,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շինտեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում:

**Նախատեսված է շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

-մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ,

-փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

-կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 3580000 ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հորմը



առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ սահմանված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի ապահովմանը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
  - շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
  - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ՝ փոշու տարածումը կանխող ցանցով,
  - շինհրապարակ մտնող և շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
  - բացառել երեկոյան ժամերին աղմկահարույց աշխատանքների իրականացումը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների, ավելցուկային բնահողի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Անհրաժեշտ է ապահովել նախագծով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ:
5. Գործունեության և հարակից տարածքներում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմին:
6. Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքներն իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի «ՀՀՇՆ 31-04.01-2024 Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմեր N 06-Ն հրամանի հավելվածի սանիտարապաշտպան գոտիների պահպանմամբ:
7. Շենքերի կառուցապատման ընթացքում հաշվի առնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշման պահանջները:



8. Բնակելի շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի հաստատած «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին N 15-Ն հրամանի պահանջները:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԱԳՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Յու. Ֆուչիկի փողոց 27/38 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աննա Սարգսյան